ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 62-Ա

« 26» հունիսի 2025 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-010-0056-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,02766 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ՍԱՆԱՍԱՐԻ ՇԱՂՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Արման Սանասարի Շաղոյանին սեփականության իրավունքով պատկանող Ամասիա համայնքի, Ամասիա բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 68/1 հասցեում գտնվող 08-010-0056-0012 կադաստրային ծածկագրով 0,069 հեկտար բնակելի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին (իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 27092023-08-0009) հարակից համայնքի սեփականություն հանդիսացող 08-010-0056-0015 կադաստրային ծածկագրով 0,02766 հեկտար հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստանի Հանրապետության

կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչի հիմքով, այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 141,9 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ ինը տասնորդական) Հայաստանի Հանրապետության դրամ, 0,02766 հեկտար հողամասի համար 39250 (երեսունինը հազար երկու հարյուր հինսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արման Սանասարի Շաղոյանին (նույնականացման քարտ՝ 015427966, տրված է 2024թվականի հունվարի 24-ին 021-ի կողմից):

2. Համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանին.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Աբրահամյան Ն.
Մարդոյան Գ.
Արսենյան Զ.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

« 26» հունիսի 2025 թվական
գյուղ Ամասիա